ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. դեկտեմբերի 5-ից 7-ը Ավստրիայի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Արմեն Հայրապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2019թ. դեկտեմբերի 5-ից 7-ը

3. **Հրավիրող կողմը՝**

Վերականգնման վարկերի բանկ

4. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Գերմանահայկական հիմնադրամի դիտորդ խորհրդի 38-րդ և Վերա-կանգնվող էներգակիրների աջակցության ծրագրի դիտորդ խորհրդի 28-րդ համատեղ նիստին:

5. **Քննարկված թեմաները՝**

Վիեննայում կայացած Դիտորդ խորհրդի նիստի շրջանակներում քննարկվեց Գերմանահայկական հիմնադրամի ընթացիկ գործունեությունը. մասնավորապես, քննարկվել են Գերմանահայկական հիմնադրամի ընթացիկ ծրագրերի կատարողականին առնչվող հարցեր: Հարցերը վերաբերում էին փոքր և միջին ձեռնարկությունների աջակցության, բնակարանային շուկայի կայուն զարգացման, վերականգնվող էներգետիկայի և գյուղատնտեսության ոլորտի զարգացման ոլորտներում վարկային ծրագրերին, ինչպես նաև գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրին և այլն:

Նախ, ներկայացվեց ԳՀՀ ԾԿԳ հիմնարկի 2019թ. վերջին ինն ամիսների ծախսերի կատարողականը և հաստատվեց «Վերականգնվող էներգետիկա» (ԳՀՀ-ՎԷ) ծրագրի Դիտորդ խորհրդի 27-րդ և «Միկրո, փոքր և միջին ձեռներեցության աջակցում» (ԳՀՀ-ՄՓՄՁ) ու «Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» (ԳՀՀ-ԲՖ) և

«Գյուղատնտեսության Ֆինանսավորում» (ԳՀՀ-ԳՖ) ծրագրերի Դիտորդ խորհրդի 37-րդ համատեղ նիստի և հանդիպումների արձանագրությունը:

Այնուհետ, ներկայացվեց նաև «Վերականգնվող էներգետիկա» (ԳՀՀ-ՎԷ) ծրագրի 3-րդ փուլի առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունը, ինչպես նաև քննարկվեցին վերջինիս 4-րդ փուլի նախապատրաստմանն առնչվող մի շարք հարցեր:

Նիստի ընթացքում քննարկվեցին Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման ծրագրի առաջընթացը, հաստատվեց նշյալ ծրագրի 4-րդ փուլի ներքո հիփոթեքային վարկավորման 6.5% տոկոսադրույքը և գյուղական ու էներգետիկայի արդյունավետության հիփոթեքային վարկավորման 5.5% տոկոսադրույքը:

Այնուհետ ներկայացվեցին ԳՀՀ-ՄՓՄՁ ծրագրերի ներքո գրանցված շուկայի հիմնական զարգացումները, վերջիններիս առաջընթացը, նշյալ ծրագրերի կատարողականի հաշվետվությունները, ինչպես նաև որոշում կայացվեց ԳՀՀ-ՄՓՄՁ ծրագրի տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ 7.5%-ի չափով:

Ներկայացվեց «Գյուղատնտեսության ֆինանսավորման ծրագրի» առաջին և երկրորդ փուլերի համախմբված զեկույցները և վարկավորման տոկոսադրույքները թողնել անփոփոխ՝ 6.0%:

Ներկայացվեցին «ԳՀՀ-ՄՓՄՁ էներգետիկայի արդյունավետության միջոցների ֆինանսավորում» ծրագրերի կատարողականը և վերջինիս առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունը: Որոշվեց ծրագրի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանել 6.5% չափով:

Հանդիպման ընթացքում ներկայացվեց նաև Գերմանահայկական հիմնադրամի աուդիտի թիմի կողմից իրականացված աուդիտի արդյունքների մասին հաշվետվությունը:

Հանդիպման շրջանակներում Հայաստանի և Վերականգնման վարկերի բանկի միջև ստորագրվեց երեք նոր վարկային համաձայնագիր՝ 60 մլն եվրո ընդհանուր արժեքով.

- «Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորում» ծրագրի հերթական փուլ (20 մլն եվրո),
- «Հայաստանի բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման» ծրագրի հերթական փուլ (20 մլն եվրո),
- «Վերականգնվող էներգետիկայի խրախուսում» ծրագրի հերթական փուլ (20 մլն եվրո):

Քննարկումների ընթացքում նշվեց նաև, որ վերականգնվող էներգետիկայի ոլորտում 2020թթ. արևային կայանների պահանջարկի և առկա ֆինանսական ռեսուրսների անհամապատասխանության հարցի կարգավորման համար պետք է իրականացվի կարիքների գնահատում, որի արդյունքում ֆինանսավորման նպատակով մինչև առաջիկա հայ-գերմանական միջկառավարական նիստը անհրաժեշտ կլինի դիմել գերմանական կողմին:

7. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արմեն Հայրապետյան

8. Ստորագրությունը, ամսաթիվը

09.12.2019թ.